

տիկին մայր Գրիգորի Գալֆայի, որք եւ իջին 'ի Յոսպէ նաւել անտի 'ի Կոստանդինուպօլիս :

Ձկնի մեկնելոյ սոցա, 'ի նմին աւուր եհաս թղթարեր 'ի Դամասկոսէ, գրեալ հրաման Կուսակալին առ Քաղաքապետն՝ փութանալի առաքել զերկու գլխաւոր վարդապետս Հայոց . գրեալ էր նաեւ առ Թէոդորոս Պատրիարք վասն այսր . նոյնպէս գրեալ էին Քեահեայ Պէյն եւ նորին գանձապետ Յարութիւնն եւ Մէհէմմէտ Պէյ Ոստիկանն, որ յերուսաղէմ էր : Թէպէտեւ յառաջագոյն խնդրեալ էր Կուսակալն առաքել զամանս, այլ Թէոդորոս զանց արարեալ էր զնովաւ, զի մի բացցի Դուռն մեծամեծ ծախուց . եւ յայս նաւագ ստիպեալ 'ի հարկեցուցիչ բանից Կուսակալին եւ Քաղաքապետին, ընտրեաց զԿիպրացի Սարգիս եւ զԻոնէսիոս վարդապետս, եւ զերկրորդ թարգման զՅովհաննէս սարկաւազն : Սակայն Քաղաքապետն ռնացեալ ընդ Հայս, առաջի եղ. նոցա զխնդիր Կուսոյն Յովսէփ Արեմաթացոյ տեղւոյն 'ի Ս . Յարութիւն, եւ պահանջէր 25,000 դահեկան, որպէս առեալ էր 'ի Յունաց . զի լուեալ Կուսակալին ոչ լուէ ասէր վասն այսր . Հայք զանց արարեալ զնովաւ տսէին՝ գան հարեալ զմիաբանս եւ զտեղիս մեր ետուք յաիշտակել, այժմ խնդրէք տուգանել եւս զմեզ . լուեալ Քաղաքապետին զբանս Հայոց, գրեալ ազգ արար Կուսակալին, եւ ընկալեալ զպատասխանն իբր յանդիմանութիւն ինքեան անխոյժ լեալ զգործէ իւրմէ, եւ ոչ ծանուցեալ 'ի ժամանակին զգիպուածսն, զայս գիր ցուցանէր Հայոց իբր սպառնալիք թէ՛ դուք ոչ լուայք յայնժամ բանից իմոց, այժմ գրեցից զեղեալսն առ Բդեշխն եւ զընդդիմանալն ձեր . եւ 'ի գնալն անդ առնել ընդ ձեզ ըստ կամաց իւրոց . ծանեան Հայք զմիտս նորա եւ զառաջակայ վտանգն, որոյ վասն խոստացան լինիլ իրաւախոհ ընդ նմա :

Ապա կոչեալ զնոսա Դատաւորին ասէր . Կուսակալն ըզձեզ եւ զՅոյնս յանդիման առնէ ատենի իւրում, եւ զգործն ըստ հրամանի Արքային կատարէ, եւ Խօճաքեանն անդ օգնէ ձեզ . այլ Նուրի Էֆէնտի զհակառակն պնդէր, լինել Բդեշխին 'ի կողմն Յունաց, եղեալ 'ի մտի կեղեքել նաեւ զՀայս . բայց պարտ է ջանալ եւ երկարել զգործն, մինչ 'ի